

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ**  
**ՋԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

**Կայացած՝ 29-ը դեկտեմբերի 2020 թվական**

**քաղաք Գյումրի**

2020 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

Նիստին մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզի թվով 42 համայնքների ղեկավարներից 40-ը, Նահապետավան և Արևշատ համայնքների ղեկավարները բացակայում էին հարգելի պատճառով:

Նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի նորանշանակ տեղակալը (Պողոս Աբրահամյան), խորհրդականները, օգնականները,
- մարզպետարանի վարչությունների և բաժինների պետերը,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի հետևյալ նախագիծը՝

**1. ՀՀ Շիրակի մարզպետարանի ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2020 թվականին կատարված աշխատանքների մասին:**

*Չեկուցողներ՝*

- |                            |   |  |
|----------------------------|---|--|
| <i>Ալբերտ Մարգարյան</i>    | - | <i>քաղաքաշինության վարչության պետ,</i>                                       |
| <i>Կարեն Բաղիշյան</i>      | - | <i>զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ:</i>         |
| <i>Սովսես Մանուկյան</i>    | - | <i>գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,</i>                   |
| <i>Լիպարիտ Մարտիրոսյան</i> | - | <i>Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,</i>               |
| <i>Լիլիթ Գորգինյան</i>     | - | <i>ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ,</i>    |
| <i>Լեյլի Ասլանյան</i>      | - | <i>առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին փոխարինող,</i> |

**2. Հայտարարություն**

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չէղան, հաստատվեց օրակարգը:

Մինչ օրակարգային հարցերի քննարկումը մարզպետն առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգել հայրենիքի պաշպանության գործում նահատակվածների հիշատակը:

Այնուհետև ՀՀ Շիրակի մարզպետը ներկայացրեց ՀՀ Շիրակի մարզպետի նորանշանակ տեղակալին՝ Պողոս Աբրահամյանին, մաղթելով նրան աշխատանքային հաջողություններ և

խոսքը փոխանցեց վերջինիս, ով ողջունելով ներկաներին ընդգծեց, որ ինքը նաև համարվում է մարզի աշխարհագրային պայմանական զորամիավորման ղեկավարը (հրամանատարը) և իր կողմից բոլոր հնարավոր միջոցները կձեռնարկվեն արդյունավետ աշխատանք կատարելու և աշխարհագրի պատրաստության ու կիրառման պլաններին համապատասխան մարզի աշխարհագրային պայմանական զորամիավորման ղեկավարումն իրականացնելու ուղղությամբ:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

**ԼՍԵՑԻՆ 1. 2020 թվականի ընթացքում քաղաքաշինության վարչության կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ՝ Ալբերտ Մարգարյան*

**(Չեկուցագիրը կցվում է):**

**ԼՍԵՑԻՆ 2. 2020 թվականին ՀՀ Շիրակի մարզի համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման վերաբերյալ**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի գրոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Կարեն Բաղիշյան*

**(Չեկուցագիրը կցվում է):**

Մարզպետը նշեց, որ սուբվենցիոն ծրագրերի իրականացումը մարզի համայնքների զարգացման համար ամենակարևոր և առաջնահերթ գործառույթներց է: Տարվա ընթացքում մտահոգություններ են եղել նախատեսված ծրագրերը ավարտին հասցնելու տեսանկյունից, բայց ի պատիվ ՏԻՄ կառույցների և շինարարական կազմակերպությունների ՀՀ Շիրակի մարզի համար նախատեսված սուբվենցիոն ծրագրերի փաթեթների գերակշիռ մասը կատարվել է:

**ԼՍԵՑԻՆ 3. 2020 թվականին գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան*

**(Չեկուցագիրը կցվում է):**

**ԼՍԵՑԻՆ 4. Մարզի համայնքների 2020 թվականի բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին**

*Չեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան*

**(Չեկուցագիրը կցվում է):**

Հարցի վերաբերյալ մարզպետը նշեց, որ տարածաշրջանի միևնույն բնակլիմայական, աշխարհագրական և ժողովրդագրական իրավիճակ ունեցող հարևան համայնքներում համայնքային բյուջեների սեփական եկամուտների ապահովման ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է համայնքապետերի աշխատանքով, միաժամանակ հավելեց, որ համայնքների զարգացումը կապահովվի միայն սեփական եկամուտների կատարման բարձր ցուցանիշներ գրանցելով:

Միաժամանակ առաջարկեց համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ ապահոված համայնքների ղեկավարներին՝ միջոցներ ձեռնարկել մինչև ընթացիկ տարվա ավարտը համայնքների բյուջեների սեփական եկամուտների ապահովման ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

**ԼՍԵՑԻՆ 5. ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից 2020 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ Լիլիթ Գորգինյան*  
**(Ձեկուցագիրը կցվում է):**

**ԼՍԵՑԻՆ 6. ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից 2020 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ**

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Լեյլի Ասլանյան*  
**(Ձեկուցագիրը կցվում է):**

**2. Հայտարարություն**

Հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության Գյումրու տարածքային կետրոնի տնօրեն Ամայա Ադամյանը:

Ողջունելով ներկաներին մանրամասն ներկայացրեց 2021 թվականին իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի մասին և հատկապես վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագիրը՝ հատուկ արցախահայության համար:

Միաժամանակ մարզի համայնքների ղեկավարներին խնդրեց իրենց համայնքներում հաշվառված և (կամ) ժամանակավոր բնակություն հաստատած արցախահայերին ուղղորդել մարզի զբաղվածության տարածքային կետրոններ՝ համապատասխան հաշվառում իրականացնելու և զբաղվածության պետական ծրագրերում ներգրավվելու համար:

Մարզի խորհրդի նիստի և ՀՀ Շիրակի մարզում 2020 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփիչ խոսքով հանդես եկավ ՀՀ Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Արման Մեյքոնյանը*